Հայտերի ներկայացման հրավեր

Հայաստանի Հանրապետություն

23 սեպտեմբեր 2016 թ.

Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագիր

Վարկ No P148836

Պայմանագիր № TSH-09

Սպանդարյանի նոր մանկապարտեզի կառուցում

1. Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկից ստացել է ֆինանսավորում Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի համար և մտադիր է միջոցների մի մասն օգտագործել **"Սպանդարյանի նոր մանկապարտեզի կառուցում"** պայմանագրի շրջանակներում վճարումներ իրականացնելու համար:

2. Սույնով **Շիրակի մարզի Սպանդարյան համայնքի Ծրագրի իրականացման կոմիտեն** հրավիրում է ներկայացնել կնքված փաթեթներ իրավասու մասնակիցներից՝ **Սպանդարյանի նոր մանկապարտեզի կառուցման համար**: Որակավորման պահանջները ներառում են. ա/ վերջին երեք տարիներից որևէ մեկ տարում հաջողությամբ կատարված **246.000.000** դրամի շին. աշխատանքների ծավալ, բ/ վերջին հինգը տարվա ընթացքում որպես գլխավոր կապալառու կատարած առնվազն երկու պայմանագրեր՝քաղաքացիական շենքերի կառուցման և վերակառուցման: Ներկայացվող աշխատանքներից յուրաքանչյուրի արժեքը չպետք է պակաս լինի **151.000.000** ՀՀ դրամից, կամ մեկ պայմանագիր առնվազն **302.000.000** ՀՀ դրամ, գ/ նվազագույնը **27.000.000 ՀՀ** դրամի իրացվելի միջոցներ և/կամ վարկային գիծ, դ/ որպես պայմանագրի շնորհման նախապայման, հայտատուն պետք է ներկայացնի ՀՀ Քաղաքաշինության նախարարության կողմից հաստատված "**Քաղաքացիական**", "**Էներգետիկական**" և "**Հիդրոտեխնիկական**" լիցենզիաներ:

3. Մրցույթն իրականացվելու է Ազգային մրցակցային մրցույթի միջոցով, համաձայն Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ «*Ապրանքների, աշխատանքների և ոչ-խորհրդատվական ծառայությունների գնում ՄԶՎԲ փոխառությունների և Համաշխարհային բանկի վարկերի ու դրամաշնորհների փոխառուների կողմից*» Հունվար 2011 թ. վերանայված Հուլիս 2014 թ. «Գնումների ուղեցույցներ»: Բացի այդ, խնդրում ենք ծանոթանալ նաև 1.6 և 1.7 ենթակետերի հետ, որոնք սահմանում են Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման մասով:

4. Շահագարգռված իրավասու մասնակիցները կարող են լրացուցիչ տեղեկություններ ստանալ Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամից և ուսումնասիրել Մրցութային փաստաթղթերը աշխատանքային ժամերին 10:00–17:00 հետևյալ հասցեով ք. Երևան, Կ.Ուլնեցու 31, 406 սենյակ, 4-րդ հարկ:

5. Շահագրգիռ իրավասու մասնակիցները Մրցութային փաստաթղթերն ամբողջությամբ Հայերեն լեզվով կարող են ստանալ վերոնշյալ հասցեով՝ վճարելով 3000 ՀՀ դրամ չվերադարձվող գումար: Վճարումն իրականացվում է բանկային փոխանցումով: Փաստաթղթերը տեղադրված են նաև www.gnumner.am կայքէջում:

6. Հայտերը պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով ամենաուշը **2016թ-ի հոկտեմբերի 21-ին ժամը 12:00-ին**: Առաջարկները ***չեն կարող*** ներկայացվել էլեկտրոնային եղանակով: Ուշացված առաջարկները կմերժվեն: Մրցութային առաջարկները հրապարակայնորեն կբացվեն մրցույթի մասնակիցների նշանակված ներկայացուցիչների, ինչպես նաև բացմանը ներկա գտնվելու բոլոր ցանկացողների ներկայությամբ ստորև նշված հասցեով:

7. Բոլոր առաջարկները պետք է ուղեկցվեն մրցույթի ապահովման հայտարարագրով:

8. Վերոնշյալ հասցեն է՝

Ում. Ավետիք Մխիթարյան

Շիրակի մարզի Սպանդարյան համայնքի Ծրագրի իրականացման կոմիտե,

ՀՀ, Շիրակի մարզի, Սպանդարյան համայնք, 1-ին փողոց, շենք 37/Համայնքապետարան/

Հեռ: +374 94 303-238